ԻՏԱԼԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ*

ՀՏԴ 342.41(450)

Էդգար Քալանթարյան
Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Հանրային կառավարման ամբիոնի դասախոս,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
edgar.kalantaryan@ysu.am

Հոդվածի նպատակն է ուղենշել խորհրդարանական կառավարման հիմնական առավելությունները՝ մասնավորապես՝ Իտալիայի խորհրդարանի սահմանադրահիրավական կառուցակարգերը: Այս համատեքստում վերլուծության են ենթարկվել Իտալիայի Ներկայացուցիչների պալատի և Սենատի ձևավորման կարգը, կառավարության հետ փոխհարաբերությունները, խորհրդարանի ձևավորման իրավական հիմքերը և այլն: Խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրներում խորհրդարանի ձևավորման վերը նշված ընթացակարգերի ուսումնասիրությունն արդի պետական կառավարման համակարգում մեծ կարևորություն ունի: Հետազոտության մեջ հատուկ անդրադարձ է կատարվել Իտալիայի խորհրդարանի օրենսդրական և իրավական գործառույթներին, հատուկ ընթացակարգերին, համապատասխան սահմանադրահիրավական նորմերին և այլն:

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել հանրային կառավարման, քաղաքագիտության, իրավագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմական դրույթները, հայեցակարգերը, մոդելներն ու մեթոդները: Հետազոտության հիմնական մեթոդաբանական հիմք է հանդիսացել վերլուծական և համեմատական մեթոդների կիրառումը:

Արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Իտալիայում խորհրդարանի ձևավորման սահմանադրահիրավական գործընթացը բավական խրթին ուղի է անցել, որը պահանջել է երկար տարիների շարունակական բարեփոխումներ: Այս ամենն իր դրական արդյունքն արձանագրել է հանրային կառավարման գրեթե բոլոր ոլորտներում՝ նպաստելով պետական կառավարման արդիականացմանը, համակարգի կայունությանը, ժողովրդավարական կառավարման ամրապնդմանը, օրինականության հաստատմանը, որոնք էլ «լավ կառավարման» ամուր հիմք են երաշխավորել Իտալիայում:

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, խորհրդարանական կառավարում, օրենսդրական նախաձեռնություն, իրավական հիմք, բիկամերալ խորհրդարան, մեծամասնական և համամասնական ընտրական համակարգ, Սենատ, կառավարություն, խորհրդարանական հանձնաժողով:*

---

* Հոդվածը ներկայացվել է 03.03.2022:
Տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը 10.03.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 10.03.2022:

Ներածություն

Խորհրդարանական կառավարման համակարգը, լինելով ժողովրդավարական վարչակարգերի, թերևս, ամենակարևոր չափման գործիքներից մեկը, մատնացույց է անում ոչ միայն ներկայացուցչական ինստիտուտների գործունեության մշակութային մոդելների կերպափոխման էվոլյուցիան, այլև՝ ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով չափելի է դարձնում հասարակության ներուժը, քաղաքացիների և քաղաքական ընտրանու ինտեգրման աստիճանը քաղաքական գործընթացներում և այլն:

Ժողովրդավարական վարչակարգերում կառավարման մոդելների արդյունավետությունը պայմանավորված է օրենսդիր-գործադիր իշխանության ճյուղերի փաստացի փոխզսպման և հակակշռման մեխանիզմներով, քաղաքական ընտրանիների ներքին ինտեգրման և հասարակության վերասոցիալականացմամբ, ինչպես նաև՝ հանրային կյանքում սահմանադրականության քաղաքագիտական մոտեցման գերակայությամբ: Հենց այդ է պատճառը, որ վերջին տարիներին ժողովրդավարության որակի գնահատման շրջանակներում դիտարկվում է խորհրդարանի գործառութային արդյունավետությունը՝ որպես չափման միավոր համարելով քաղաքացիական ներուժը:

Խորհրդարանական համակարգի արդյունավետ գործառնության համար անհրաժեշտ են մի քանի նախադրյալներ, մասնավորապես՝ զարգացած կուսակցական համակարգ, խորհրդարանական մշակույթի հաստատում, ժողովրդավարության բարձր մակարդակ և այլն, որոնց բացակայության դեպքում այն թերի է և ոչ արդյունավետ: Այսպիսի կառավարումը բնութագրվում է նրանով, որ իշխանական գերակայությունը պետական կառավարման այդ համակարգում պատկանում է խորհրդարանին, իսկ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում վերջինիս, այլ ոչ թե նախագահի առջև և հրաժարական է տալիս խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելու դեպքում[1]: Գործադիր իշխանությունը՝ ի դեմս կառավարության, ունի ինքնուրույնություն, որի օրինակ կարող է լինել այն, որ խորհրդարանի կողմից կառավարությանը երկրորդ անգամ անվստահություն հայտնելու դեպքում կառավարությունը կարող է դիմել երկրի նախագահին խորհրդարանը ցրելու և նոր ընտրություններ նշանակելու համար: Այստեղ կառավարությունը որոշակի կախվածություն է ունենում խորհրդարանից, որն արտահայտվում է նրանում, որ կառավարության ղեկավար է նշանակվում խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցությունից կամ կոալիցիայից: Կառավարությունը հաշվետու է միայն խորհրդարանին և վերահսկվում է նրա կողմից, և ցանկացած ժամանակ խորհրդարանը կարող է կառավարության հրաժարականը պահանջել անվստահության քվեի միջոցով:

Խորհրդարանական համակարգ ունեցող գրեթե բոլոր պետություններում առկա են վերը նշված կարգավորումները, և այս համատեքստում առանձնակի կարևորություն ունի Իտալիայի խորհրդարանական կառավարման մոդելը: Իտալիայի խորհրդարանը բաղկացած է երկու պալատներից՝ Ներկայացուցիչների պալատ և Սենատ: Ըստ Իտալիայի Սահմանադրության՝ խորհրդարանը բիկամերալ է (երկպալատ)՝ Ներկայա-

---

[1] Տե՛ս **Քալանթարյան է.,** *Կառավարման ձևերի կերպափոխման միտումները հետխորհրդային երկրներում,* Բանբեր Երևանի համալսարանի. Միջ. Հարաբ.,Քաղաքագիտություն, № 1 (28), Եր. 2019թ., էջ 69-75, http://www.ysu.am/files/07E_Kalantaryan-1558951391-.pdf:

ցուցիչների պալատ և Սենատ:

Ներկայացուցիչների պալատը կազմված է 630 պատգամավորներից, որոնք ընտրվում են 18 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիների կողմից, սակայն պալատի անդամ կարող են ընտրվել այն քաղաքացիները, ովքեր ունեն 25 տարեկանից բարձր տարիք: Սենատը բաղկացած է 315 սենատորներից, որոնք ընտրվում են 18 տարին լրացած և ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիների կողմից (նախկինում այդ տարիքը 25-ից բարձր էր), և Սենատի անդամ կարող են դառնալ առնվազն 40 տարեկան քաղաքացիները[1]:

Ըստ Իտալիայի սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի (1963 թվական)՝ երկու պալատներն էլ ընտրվում են հինգ տարի ժամկետով, և վերջինս չի կարող երկարաձգվել՝ բացառությամբ պատերազմի դեպքում[2]: Հիմնական սկզբունքը, որով որոշվել է պատգամավորների թիվը՝ քաղաքացիների և պատգամավորների քանակական հարաբերակցությունն է: 1948-1963 թվականներին այդ թիվը փոփոխական էր, մինչդեռ բնակչության հետ այդ հարաբերակցությունը ֆիքսված էր՝ մեկ պատգամավոր՝ յուրաքանչյուր 80,000 բնակչի հաշվով և համապատասխանաբար մեկ սենատոր՝ յուրաքանչյուր 200,000 բնակչի հաշվով[3]: Սենատորների ընդհանուր թիվը որոշվում է ընտրված և ցմահ նշանակված սենատորների հանրագումարով: Իտալիայում յուրաքանչյուր նախկին նախագահ ցմահ սենատոր է իրավունքի ուժով[4]: Ավելին, հանրապետության նախագահը կարող է ցմահ սենատորներ նշանակել այն քաղաքացիներին, ովքեր իրենց վաստակով և հայրենիքին մատուցած ծառայություններով Իտալիան հանրաճանաչ են դարձրել հասարակական, գիտական, գեղարվեստական և գրական ոլորտներում: Հանրապետության նախագահի կողմից նշանակված ցմահ սենատորների թիվը չի կարող լինել հինգից ավելին: Իտալացի խորհրդարանականների թվի վերաբերյալ տվյալները կարելի է համեմատել եվրոպական այլ երկրների հետ՝ հաշվի առնելով քաղաքական ապարատի կառուցվածքային տարբերությունները և բնակչության տարբերությունները: Օրինակ՝ 2011 թվականին Իտալիան Եվրոպայում երկրորդ տեղն էր զբաղեցնում խորհրդարանականների բացարձակ թվով, որին գերազանցում էր միայն Միացյալ Թագավորությունը՝ Ստորին պալատ՝ 650, Լորդերի պալատ՝ 827 պատգամավորների թվով[5]:

Խորհրդարանի և պալատների կազմակերպման ընթացակարգը սահմանված է նախևառաջ Սահմանադրությամբ և խորհրդարանական կանոնակարգով: Իրավատու մարմինները, որոնք պետք է կանոնակարգեն խորհրդարանի ընթացակարգերը, նախագահներն են, նախագահության գրասենյակը և մշտական հանձնաժողովները: Այս

---

[1] Տե՛ս Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը, ընդունված 1948 թ.-ին, հոդված 56-57, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pd:

[2] Տե՛ս Իտալիայի 1963թ.-ի n. 2 սահմանադրական օրենքը, https://www.asgi.it/banca-dati/legge-costituzionale-9-febbraio-1963-n-2/:

[3] Տե՛ս **Ciaurro G. F, Pacelli M.,Tanda A. P.** *Le camere del parlamento: strutture, funzioni, apparati, regolamenti,* Roma, Colombo, 1986, էջ 49-52:

[4] Տե՛ս Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը, հոդված 59, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pdf:

[5] Տե՛ս **Manzella A.** *Il parlamento*, terza edizione, Bologna, 2003, էջ 56-72:

կառույցներից բացի, կանոնադրությամբ նախատեսված այլ մարմիններ նույնպես մասնակցում են կազմակերպական աշխատանքներին (խմբեր, կուսակցությունների խորհրդարանական խորհուրդներ՝ տեխնիկական գործառույթներով, խմբերի ղեկավարների համաժողովը, որոնք պատասխանատու են աշխատանքների ծրագրի և օրակարգի սահմանման համար), քննարկումների միջոցով: Պալատի և Սենատի բյուրոները ներկայացնում են բոլոր խորհրդարանական խմբերը: Նրանք ունեն վարչական պատասխանատվություն և պարտականություն, որոնք վերաբերում են ներքին կարգապահությանը և կազմակերպմանը: Ներքին վարչական գործառույթներով որոշվում են պալատի վարչակազմի ակտերի դեմ բողոքները ևս[1]:

2019 թվականի հուլիսի 11-ին Սենատը, և այնուհետև հոկտեմբերի 8-ին Ներկայացուցիչների պալատը հավանություն տվեցին սահմանադրական օրենքի առաջարկին, որը ենթադրում էր «Փոփոխություններ Սահմանադրության 56-րդ, 57-րդ և 59-րդ հոդվածներում՝ պատգամավորների թվի կրճատման վերաբերյալ»: Քվեարկությունը, որն ի սկզբանե նախատեսված էր 2020 թվականի մարտի 29-ին, հետաձգվեց մինչև 2020 թվականի սեպտեմբերի 20-21-ը՝ COVID-19 համաճարակի պատճառով: Հանրաքվեի ենթարկված բարեփոխումը հաստատվել է ձայների 69,96%-ով և դարձել թիվ 1 սահմանադրական օրենքը: 19-րդ օրենսդիր մարմնից սկսած խորհրդարանում պաշտոնավարելու են 400 պատգամավորներ և 200 ընտրված սենատորներ[2]:

Խորհրդարանի նախատիպն Իտալիայում առաջին անգամ կիրառվել է դեռևս 1840-ական թվականներին՝ Սարդինիայի թագավորությունում, որտեղ և ձևավորվել է նոր շրջանի համահտալական առաջին բարձրագույն օրենսդիր մարմինը: Ալբերտինի կանոնադրությամբ ուրվագծված Սարդինիայի թագավորության խորհրդարանը բաղկացած էր Պատգամավորների պալատից և Սուբալպյան Սենատից: Սավոյայի նահանգի կառավարման ձևը բնութագրվում էր որպես զուտ սահմանադրական միապետություն, քանի որ կառավարության քաղաքական պատասխանատվությունը սահմանափակվում էր միայն թագի հետ հարաբերություններով, մինչդեռ օրենսդրական գործառույթը համատեղ իրականացնում էին պալատները և թագավորը՝ ավանդապահը: Թագավորական իրավասությունները կրճատվեցին խորհրդարանական պրակտիկայի ներդրման պատճառով, ինչը նշանավորեց անցումը դեպի դուալիստական սահմանադրական միապետություն. կառավարությունը, փաստորեն, քաղաքականապես պատասխանատու դարձավ նաև խորհրդարանի նկատմամբ: Իտալիայի թագավորության հռչակումից հետո՝ 1861 թվականին, Սարդինիայի թագավորության ինստիտուցիոնալ ճարտարապետությունը պահպանվեց իր էական գծերով:

Դարավերջի ճգնաժամը, Պատգամավորների պալատի և կառավարության միջև մշտական հակամարտությունը ստիպեցին պահպանողականներին ոտքի կանգնել՝ ի պաշտպանություն թագի սկզբնական իրավասությունների: Շարունակականությունը, նույնիսկ ֆորմալ տեսանկյունից, խզվեց միայն 1939 թվականին, երբ Պատգամավոր-

---

[1] Տե՛ս Իտալիայի քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածը, https://www.gazzettaufficiale.it/atto/corte_costituzionale/caricaDettaglioAtto/originario;jsessionid=lIRs9x7D-EHJu2kUn4vF5A__.ntc-as2-guri2b?atto.dataPubblicazioneGazzetta=2015-0819&atto.codiceRedazionale=15C00280:

[2] Տե՛ս Իտալիայի n. 1/2020 սահմանադրական օրենքը, https://www.riformeistituzionali.gov.it/it/la-riduzione-del-numero-dei-parlamentari/:

ների պալատը փոխարինվեց Ֆասկների և կորպորացիաների պալատով մինչև 1943 թվականը:

Անցումային սահմանադրության ժամանակաշրջանում օրենսդրական գործառույթն իրականացնում էր ոչ ընտրովի ժողովը՝ Ազգային խորհուրդը (1945թ. սեպտեմբեր-1946թ. հունիս), այնուհետև՝ Հիմնադիր ժողովը, Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո՝ հանրապետական խորհրդարանի նոր պալատները: Իսկ ավելի ուշ՝ ֆաշիզմի տապալումից և Իտալիայի Սահմանադրության ընդունումից հետո, ստեղծվեցին օրենսդրական հնարավորություններ, որոնք արձանագրեցին ժողովրդավարական նոր կառավարման ընթացակարգեր, մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանության, աշխատանքի, հանգստի, վարձատրության, սոցիալական աջակցության հնարավորություններ և այլն (Տես աղյուսակ 1)[1]:

Աղյուսակ 1. Իտալիայի խորհրդարանի ձևավորումը 1848-ից մինչև այսօր

ԹՎԱԿԱՆ	ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ	ՎԵՐԻՆ ՊԱԼԱՏ	ՍՏՈՐԻՆ ՊԱԼԱՏ
1848-1861	Ալբերտինոյի կանոնադրություն	Ենթլյան սենատ	Ներկայացուցիչների պալատ
1861-1939		Թագավորության սենատ	Ներկայացուցիչների պալատ
1939-1943			Ֆասկների և կորպորացիաների պալատ
1943-1945	Անցումային սահմանադրության շրջան	-	
		Ազգային խորհուրդ	
1945-1946		Հիմնադիր ժողով	
1946-1948			
1948-ից հետո	Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն	Սենատ	Ներկայացուցիչների պալատ

1948 թ.-ի Սահմանադրության ընդունումից հետո Իտալիայում Ներկայացուցիչների պալատում և Սենատում տեղերի բաշխումն իրականացվում է մեծամասնական և համամասնական սկզբունքով:

Մեծամասնական կամ մաժորիտար ընտրական համակարգը ունի 2 տեսակ՝

- *բացարձակ մեծամասնական,*
- *հարաբերական մեծամասնական:*

Բացարձակ մեծամասնական համակարգի դեպքում թեկնածուներին հարկավոր է հավաքել 50%+1 ձայն, իսկ հարաբերական մեծամասնականի դեպքում հաղթող է ճանաչվում այն թեկնածուն, ով հավաքել է առավել թվով քվեներ: Այս համակարգը կոչվում է նաև պլյուրալիստական ընտրական համակարգ: Որպես կանոն՝ այս դեպքում ընտրություններն անց են կացվում մեկ փուլով: Բացարձակ մեծամասնականի դեպքում հնարավոր է նաև ընտրությունների երկրորդ փուլի անցկացում, որի դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել թվով քվե ստացած 2 թեկնածուները: Իսկ արդեն երկրորդ փուլում հաղթող է ճանաչվում ձայների առավել թիվ ստացած թեկնածուն: Մեծամասնական ընտրակարգը հիմնականում կիրառվում է նախագահական ընտ-

[1] Տե՛ս **Capano G., Giuliani M.** *Parlamento e processo legislativo in Italia,* Bologna, 2001, էջ 115-119:

րությունների ժամանակ, իսկ որոշ դեպքերում նաև խորհրդարանական ընտրություններում:

Համամասնական ընտրական համակարգերի պայմաններում ընտրություններն անց են կացվում կուսակցական ցուցակներով: Այս դեպքում ընտրողներն իրենց ձայնը տալիս են առանձին կուսակցությունների, և ըստ այդ ձայների տոկոսային հարաբերակցության, կուսակցությունները տեղ են զբաղեցնում խորհրդարանում: Գործում է համամասնական ընտրական համակարգի 2 տարբերակ: Առաջինի դեպքում կուսակցություններն իրենք են ձևավորում իրենց ընտրացուցակներն ըստ հերթականության: Երկրորդ դեպքում ընտրողները հնարավորություն են ունենում որոշելու համամասնական ցուցակի հերթականությունը: Այս քվեարկությունը կոչվում է ռեյտինգային կամ վարկանշային քվեարկություն, որի օգնությամբ որոշվում է ցուցակի մեջ գտնվող մարդկանց հեղինակությունը[1]:

Իտալիայում Ներկայացուցիչների պալատի 630 պատգամավորներից 232-ը (37%) ընտրվում են մեծամասնական, 386-ը՝ (61%) համամասնական (3% արգելքով) և 12-ը (2 %)՝ արտերկրում բնակվող իտալացիների ձայներով: Իսկ Սենատի 315 սենատորներն ընտրվում են համապատասխանաբար 116-ը (37%)՝ մեծամասնական, 193-ը (61%) ՝համամասնական և 6-ը (2%)՝ արտերկրում բնակվող Իտալացիների ձայներով[2]:

Իտալիայի պառլամենտի պալատներն օգտվում են հատուկ իրավասություններից՝ երաշխավորելով իրենց ինքնավարությունը պետական իշխանության մյուս մարմինների իրավասությունների նկատմամբ: Դրանք են՝

- կարգավորող ինքնավարություն. յուրաքանչյուր պալատ ինքնուրույն է կազմում և հաստատում բոլոր կանոնակարգերը, որոնք վերահսկում են իր աշխատանքը,

- ֆինանսական ինքնավարություն. պալատներն ինքնուրույն որոշում են իրենց գործառույթների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների չափը,

- վարչական ինքնավարություն. յուրաքանչյուր պալատ կազմակերպում է իր վարչական մարմինների կազմակերպումը և մշտական աշխատողների աշխատանքի ընդունումը բացառապես ազգային հանրային մրցույթի միջոցով,

- նստավայրի անձեռնմխելիություն. օրինապահ մարմինները խորհրդարան կարող են մուտք գործել միայն պատգամավորների և սենատորների թույլտվության պարագայում[3]:

Իտալիան բնորոշվում է որպես կատարյալ բիկամերալ (երկպալատ) խորհրդարանական համակարգ ունեցող երկիր. դա ենթադրում է, որ խորհրդարանի երկու պալատներն էլ օժտված են հավասար իրավասություններով: Խորհրդարանի յուրաքանչյուր պալատի անդամները կարող են ներկայացնել օրենքի նախագիծ: Օրենքի ընդունման կանոնակարգը հետևյալն է. ներկայացուցիչների պալատում քննարկվելուց և հավանության արժանանալուց հետո, օրենքը նույն ընթացակարգով քննարկվում է նաև սենատում, և՝ հակառակը: Օրենքը վերջնական ուժի մեջ կարող է մտնել այն ժամանակ, երբ առկա են երկու պալատների դրական եզրակացությունները: Իհարկե, սա

---

[1] Տե՛ս **Levico A.** Vota x: storia di un segno. La legislazione elettorale dal '700 ad oggi, Araba Fenice, 2009, էջ 336-341:

[2] Տե՛ս **Borsi Լ.** Distribuzione seggi alla Camera dei deputati ed al Senato della Repubblica, M.,2017, էջ 9:

[3] Տե՛ս **Onida V. e Pedrazza Gorlero M.** Compendio di diritto costituzionale, Giuffrè, 2011, ISBN 978-88-14-17193-2:

շատ կարևոր հանգամանք է, քանի որ այն երաշխավորում է առավել օբյեկտիվ, թափանցիկ, արդյունավետ օրենսդրական գործունեություն: Օրենքի ընդունման ընթացակարգն ունի հետևյալ հաջորդականությունը. նախաձեռնություն → նախաքննություն → փորձաքննություն → հաստատում (հոդված առ հոդված, այնուհետև՝ վերջնական) → հրապարակում → հրատարակում:

Օրենսդրական նախաձեռնությամբ կարող են հանդես գալ կառավարությունը, առանձին պատգամավորներ, 50000 ընտրող քաղաքացիներ՝ համապատասխան ստորագրահավաքով, առանձին մարզային խորհուրդներ, տնտեսության և աշխատանքի Ազգային խորհուրդը (C.N.E.L.): Նախաձեռնությունը երկու պալատներից մեկին ներկայացվելուց հետո, այն պետք է հանձնարարվի իրավասու հանձնաժողովին՝ նախնական դիտարկում իրականացնելու համար, որից հետո այն պետք է քննվի նաև այլ հանձնաժողովներում: Այս գործընթացն ընդունված է անվանել «հանձնաժողովների կողմից ֆիլտրում-զտում»:

Այս պարագայում օրենսդրական գործընթացը կարող է ընթանալ երկու տարբեր ուղիներով՝ սովորական և հատուկ ընթացակարգերով: Սովորական ընթացակարգով իրավասու հանձնաժողովը հավաքվում է կենտրոնական նստավայրում և հաշվետվություն կազմելուց ու զեկուցող նշանակելուց հետո տեքստը ձևակերպելու և հաստատելու իրավասությունը փոխանցում է ժողովին: Այս գործընթացի ժամանակահատվածը Ներկայացուցիչների պալատում 4 ամիս է, իսկ Սենատում՝ 2 ամիս: Պալատում մեկ անգամ տեղի է ունենում ընդհանուր քննարկում, որին հաջորդում է հոդված առ հոդված քննությունը և քվեարկությունը, քվեարկության բացատրությունները և վերջապես ընդհանուր քվեարկությունը, որը սովորաբար տեղի է ունենում բաց եղանակով (նախատեսվում է գաղտնի քվեարկություն այն հարցերի համար, որոնք ենթադրում են անհատական խղճի թելադրված ընտրություններ): Եթե նախագիծը դրական ձայն է ստանում մի պալատի կողմից, այն անցնում է խորհրդարանի մյուս մարմնին, որը պետք է քվեարկի այն առանց հետագա փոփոխությունների: Փոփոխությունների դեպքում տեքստը վերադառնում է մյուս պալատ, որը պետք է նորից քննարկի և հաստատի այն: Եթե մի քանի անգամ կրկնվում է այս ընթացակարգը, ապա մենք գործ ունենք «մաքոքային» երևույթի հետ: Այս ընթացակարգը պարտադիր է սահմանադրական և ընտրական օրենսդրական կարգավորումներով[1] : Մնացած բոլոր դեպքերում կարող է կիրառվել հատուկ ընթացակարգ (կամ ապակենտրոնացված օրենսդրական ընթացակարգ): Դրանք են նախատեսված հրամանագրերը, տարեկան համայնքային իրավունքի, տարեկան ֆինանսական փաստաթղթի՝ բյուջեի մասին օրենքը, հարակից կայունության մասին օրենքը (նախկին ֆինանսական օրենք) և հարակից օրինագծերը[2]: Խորհրդարանի երկու թևերում օրենքի ընդունման վերաբերյալ ընդհանուր համաձայնությունից հետո, այն ներկայացվում է հանրապետության նախագահին, ով մեկ ամսվա ընթացքում կարող է հաստատել օրենքը, որը պետք է համապատասխանի երկրի Սահմանադրությանը: Ինչից հետո օրենքը տպագրվում է և ընդունվում որպես ի գի-

---

[1] Տե՛ս Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը, հոդված 72, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pdf:

[2] Տե՛ս Իտալիայի պետական բյուջեի կազման մասին վերլուծություն, https://www.academia.edu/2462641/Esame_parlamentare_dei_documenti_finanziari_in_sessione_di_bilancio:

տություն:

Խորհրդարանական Իտալիայում Խորհրդարանն օրենսդրական գործառույթից բացի իրականացնում է նաև կառավարության նկատմամբ վերահսկողության և քաղաքական կողմնորոշման գործառույթներ: Վերահսկիչ գործառույթն արտահայտվում է հարցապնդումներով և հարցաքննություններով: Հարցերը կարող են լինել գրավոր և բանավոր, որտեղ կառավարության անդամները (վարչապետ, նախարարներ) պետք է պատասխանեն հնչեցված հարցին՝ ըստ համապատասխան ոլորտների: Խորհրդարանը պետք է ունենա նաև քաղաքական ուղվածության գործառույթ, որը կերաշխավորի խորհրդարանի և կառավարության վստահության ամրապնդումը: Վերջապես օրենսդրական գործառույթը, որը ենթադրում է իրավական ակտերի, օրենսդրական նորմերի, վերահսկողության և կառավարության կառուցակարգերի ամրապնդում[1]:

Եզրակացություն

Ամփոփելով Իտալիայի խորհրդարանի ձևավորման սահմանադրաիրավական կառուցակարգերի վերլուծությունը՝ պետք է արձանագրել, որ Իտալիայում խորհրդարանի ձևավորման գործընթացը բավական խրթին ուղի է անցել, որը պահանջել է երկար տարիների շարունակական բարեփոխումներ, որոնք իրենց դրական արդյունքն արձանագրել են պետական կառավարման գրեթե բոլոր ոլորտներում: Այսօր ժամանակակից աշխարհն առանձնակի ուշադրության է արժանացնում պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը, որը նպաստում է ժողովրդավարական կառավարման արժեհամակարգի, օրինականության, թափանցիկ կառավարման, քաղաքացիական հասարակության զարգացմանը, պետական կառավարման մարմինների գործունեության արդիականացմանը, որոնք էլ «լավ կառավարման» ամուր հիմք են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր և գիտական հոդվածներ

1. Քալանթարյան Է. Կառավարման ձևերի կերպափոխման միտումները հետխորհրդային երկրներում, Բանբեր Երևանի համալսարանի. Միջ. Հարաբ.,Քաղաքագիտություն, № 1 (28), Եր. 2019թ., http://www.ysu.am/files/07E_Kalantaryan-1558951391-.pdf:
2. Borsi L. Distribuzione seggi alla Camera dei deputati ed al Senato della Repubblica, M.,2017:
3. Capano G., Giuliani M. Parlamento e processo legislativo in Italia, Bologna, 2001:
4. Ciaurro G. F, Pacelli M.,Tanda A. P. Le camere del parlamento: strutture, funzioni, apparati, regolamenti, Roma, Colombo, 1986:
5. Levico A. Vota x: storia di un segno. La legislazione elettorale dal ‘700 ad oggi, Araba Fenice, 2009:
6. Longi V. Elementi di diritto e procedura parlamentare, Milano, 1994:
7. Manzella A. Il parlamento, terza edizione, Bologna, 2003:

Իրավական ակտեր

[1] Տե՛ս **Longi V.** *Elementi di diritto e procedura parlamentare,* Milano, 1994, էջ 58-63:

1. Իտալիայի 1963թ.-ի n. 2 սահմանադրական օրենքը, https://www.asgi.it/banca-dati/legge-costituzionale-9-febbraio-1963-n-2/:
2. Իտալիայի n. 1/2020 սահմանադրական օրենքը, https://www.riformeistituzionali.gov.it/it/la-riduzione-del-numero-dei-parlamentari/:
3. Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը, ընդունված 1948 թ.-ին, հոդված 56-57, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pd:
4. Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը, հոդված 59, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pdf:
5. Իտալիայի Հանրապետության Սահմանադրությունը, հոդված 72, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pdf:
6. Իտալիայի պետական բյուջեի կազման մասին վերլուծություն, https://www.academia.edu/2462641/Esame_parlamentare_dei_documenti_finanziari_in_sessione_di_bilancio:
7. Իտալիայի քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածը, https://www.gazzettaufficiale.it/atto/corte_costituzionale/caricaDettaglioAtto/originario;jsessionid=IIRs9x7D-EHJu2kUn4vF5A__.ntc-as2-guri2b?atto.dataPubblicazioneGazzetta=2015-0819&atto.codiceRedazionale=15C00280:
8. Onida V. e Pedrazza Gorlero M. Compendio di diritto costituzionale, Giuffrè, 2011, ISBN 978-88-14-17193-2:

REFERENCES

1. Borsi Լ. Distribuzione seggi alla Camera dei deputati ed al Senato della Repubblica, M.,[Distribution of seats in the Chamber of Deputies and in the Senate of the Republic, Rome], 2017, (In Italian)
2. Capano G., Giuliani M. Parlamento e processo legislativo in Italia, [Parliament and the legislative process in Italy, Bologna], 2001, (In Italian)
3. Ciaurro G. F, Pacelli M.,Tanda A. P. Le camere del parlamento: strutture, funzioni, apparati, regolamenti [The chambers of parliament: structures, functions, apparatuses, regulations, Roma, Colombo], 1986, (In Italian)
4. Italiayi 1963 t'-I n.2 sahmanadrakan o'renqy', https://www.asgi.it/banca-dati/legge-costituzionale-9-febbraio-1963-n-2/, [Italy 1963 n. 2 constitutional law, Italy], 1963, (In Italian)
5. Italiayi n. 1/2020 sahmanadrakan orenqy', https://www.riformeistituzionali.gov.it/it/la-riduzione-del-numero-dei-parlamentari/, [Italy n. 1/2020 constitutional law, Italy], 2020, (In Italian)
6. Italiayi Hanrapetut'yan Sahmanadrut'yuny' y'ndunvac' 1948 t'.-in, hodvac 56-57, https://www.cortecostituzionale.it/documenti/dunload/pdf/Costituzione_della_Repubblica

_italiana.pdf, [The Constitution of the Italian Republic, Italy], 1948, (In Italian)
7. Italiayi Hanrapetut'yan Sahmanadrut'yuny', hodvac' 59, https://www.cortecostituzionale.it/documenti/dunload/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pdf, [The Constitution of the Italian Republic, Italy], 1948, (In Italian)
8. Italiayi Hanrapetut'yan Sahmanadrut'yuny', hodvac' 72, https://www.cortecostituzionale.it/documenti/dunload/pdf/Costituzione_della_Repubblica_italiana.pdf, [The Constitution of the Italian Republic, Italy], 1948, (In Italian)
9. Italiayi petakan byujei kazman masin verluc'utyun, https://www.academia.edu/2462641/Esame_parlamentare_dei_documenti_finanziari_in_sessione_di_bilancio, [Analysis of the Italian state budget], 1999, (In Italian)
10. Italiayi qaxaqaciakan o'rensgrqi 12-rd hodvac'y', https://www.gazzettaufficiale.it/atto/corte_costituzionale/caricaDettaglioAtto/originario;jsessionid=lIRs9x7D-EHJu2kUn4vF5A__.ntc-as2-guri2b?atto.dataPubblicazioneGazzetta=2015-0819evatto.codiceRedazionale=15C00280, [Article 12 of the Italian Civil Code], (In Italian)
11. Levico A. Vota x: storia di un segno. La legislazione elettorale dal '700 ad oggi, Araba Fenice,[Vote x: history of a sign. Electoral legislation from the 1700s to today, Cuneo] 2009, (In Italian)
12. Longi V. Elementi di diritto e procedura parlamentare,[Elements of law and parliamentary procedure ,Milano], 1994, (In Italian)
13. Manzella A. Il parlamento, terza edizione,[The parliament, third edition Bologna], 2003, (In Italian)
14. Onida V. e Pedrazza Gorlero M. Compendio di diritto costituzionale, Giuffrè, 2011, ISBN 978-88-14-17193-2, [Compositional constitutional right], 2011, (In Italian)
15. Qalantaryan E' Karavarman d'everi kerpapoxman mitumnery' hetxorhrdayin erkrnerum, Banber Erevani hamalsarani, Mij. Harab. Qaxaqagitut'yun, № 1 (28)[Trends in the transformation of governance in post-Soviet countries, Erevan], 2019, (In Armenian).

РЕЗЮМЕ

Конституционная основа формирования итальянского парламента

Эдгар Калантарян

Ереванский государственный университет, факультет международных отношений, кафедра государственного управления, кандидат политических наук, доцент

Ереван, Республика Армении

***Ключевые слова*:** Конституция, парламентское правительство, законодательная инициатива, правовая основа, двухпалатный парламент, мажоритарно-пропорциональная избирательная система, Сенат, правительство, парламентская комиссия.

Цель статьи - указать на основные преимущества парламентского правления, в частности на конституционные структуры парламента в Италии. В этом контексте были проанализированы механизмы формирования Палаты Представителей и Сената, а так же отношения с правительством, правовые основы парламента и т.д.

В странах с парламентской системой правления изучение указанных выше механизмов и

мер парламентаризма имеет большое значение в современной системе государственного управления. В исследовании особое внимание уделялось законодательно-правовым функциям парламента Италии, специальным процедурам, конституционным нормам и др.

Теоретической основой для решения задач поставленных в исследовании, стали основные положения, понятия, модели и методы классических и современных теорий государственного управления, политологии, права. Основной методологической основой исследования стало использование аналитико-сравнительных методов.

В результате был сформулирован вывод, что сам по себе конституционный процесс формирования парламента в Италии прошел достаточно сложный путь, потребовавший многолетних непрерывных реформ. Все это оказало положительное влияние практически на все сферы государственного управления, способствуя модернизации государственного управления, стабильности системы, укреплению демократического правления, установлению верховенства закона, которые заложили прочную основу для «хорошее управление» в Италии.

SUMMARY

Constitutional Basis for the Formation of the Italian Parliament

Edgar Kalantaryan

Yerevan State University, Faculty of International Relations, Chair of Public Administration,
Ph.D. in Political Sciences, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia

Key words: Constitution, parliamentary government, legislative initiative, legal framework, bicameral parliament, majority-proportional electoral system, Senate, government, parliamentary commission.

The purpose of the article is to point out the main advantages of parliamentary government, particularly, the constitutional structures of the Italian Parliament. In this context, the procedure of the House of Representatives, the Senate, the government relations, the legal bases of the parliament were analyzed. In countries with a parliamentary system of government, the study of the above-mentioned parliamentary formation procedures are of great importance in the modern system of public administration. In current research paper, special reference was made to the legislative-legal functions of the Italian Parliament, special procedures, relevant constitutional norms, etc.

The theoretical basis for solving the problems posed in the research was the basic provisions, concepts, models and methods of classical and modern theories of public administration, political science, law. The main methodological basis of the research was the use of analytical-comparative methods.

As a result of research, we have come to the conclusion that the constitutional process of forming the parliament in Italy has passed a rather complicated path, which required many years of continuous reforms. All this has had a positive effect on almost all areas of public administration, contributing to the modernization of public administration, the stability of the system, the strengthening of democratic governance, the establishment of the rule of law, which have provided a solid foundation for "good governance" in Italy.